Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

281
Տ-46

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

# ԴԱՒԻԹ ՀԱՐՔԱՑԻ

Արտատպութիւն 1902 թ. «Արարատ»ի Սեպտ.-Հոկտ. համարից

Дозволено цензурою 4 Февраля 1903 г. г. Тифлисъ.

Հրամանաւ
**Տ. Տ. ՄԿՐՏՉԻ**
**Վեհափառ եւ սրբազնագոյն կաթուղիկոսի**
Ամենայն Հայոց

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.
1903

281
S-46

04 NOV 2009

2 2508/2

7147

...евраля 1903 г. г. Тифлисъ.

# ԴԱՒԻԹ ՀԱՐՔԱՑԻ

Դաւթի մնացորդների այս հրատարակութեամբ լրանում է այն փոքրիկ հրատարակութիւնների շարքը [Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Ստեփ. Իմաստասէր, Դ. Հարքացի], որոնց վրայ հիմնուած են իմ եզրակացութիւնները Հարքացու անձի և ժամանակի վերաբերութեամբ։

1. Դաւիթ Հարքացին, որ կոչւում է նաև Հերտանացի կամ Հերեանացի՝ գիւղի անունով, այլ և Ներգինացի կամ Ներքինացի՝ Ներքնավանքի անունով, ուր թաղուած է ըստ աւանդութեան, չէ մի առասպելեալ անձնաւորութիւն, բնաւ գոյութիւն չունեցող, ինչպէս կարծել են նորագոյն քննադատները։

2. Այս Դաւիթը չէ նաև Ստ. Սիւնեցու ընկեր Դաւիթ Հիւպատը, կամ եօթներորդ դարու Դաւիթ Բագրեւանդացի երկաբնակ փիլիսոփան։

3. Այս Դաւիթը չէ աշակերտ Սահակի և Մեսրոպի, ոչ էլ հինգերորդ դարու գրող, ինչպէս կարծուել է մինչև այժմ։ Ոչ էլ չորրորդ դարու հեղինակ՝ Պրոյերեսիոսի նման Աթէնք յաճախող յունախօս հայերից։

4. Հարքացու գրութեանց ժամանակն է վեցերորդ դարու առաջին կէսը։ Հարքացին ժամանակակից է Պետրոս Սիւնեցուն, Եղիշէին, թերևս նաև Յովհան Կարնեցուն, եթէ վերջինս աւելի կրտսեր չէ ժամանակով։

5. Հարքացին կրօնական և փիլիսոփայական գրող է, մասնակցած իւր ժամանակի աստուածաբանական վէճերին, կուսակից Յուլիանոս Ալիկառնացու և հակառակորդ Սևերոսի, ուրեմն միաբնակ, բայց հակասևերեան, ինչպէս որ է նաև Պետրոս Սիւնեցին։

6. Հարքացին է պարագլուխը այն մեծ յունաբան դպրոցի, որի գլխաւոր արտադրութիւններն են Փիլոն Եբրայեցու երկերի թարգմանութիւնը, Սահմանաց գիրք, և նման փիլիսոփայական

գրութիւնները, լինին բնագիր թէ թարգմանութիւն, աստուածաբանական և մեկնաբանական գրուածքներ, ևայլն։

7. Հարքացին հաւանականաբար գրել է թէ հայերէն և թէ յունարէն, գործնէութեան տեղն է եղել Արևելքը՝ Հայաստան Ասորիք, Պաղեստին, մանաւորապէս Գազա, և Աղեքսանդրիա, բայց ոչ Աթէնք, ուր գնում էին Յունաց բաժնի հայերը չորրորդ դարում, բայց ոչ հինգերորդում և ոչ վեցերորդում, երբ արդէն Աթէնքի դպրոցը փակուեց [529-ին]։

8. Եղիշէն, Վարդանանց պատմիչը, թէև ոչ Հարքացու դպրոցից, սակայն օգտուել է Փիլոնի թարգմանութիւններից, ինչպէս այդ արդէն ցոյց է տուել Աւգերեան, ուստի և նրա գրութեան ժամանակն է վեցերորդի առաջին կէսը։ Եղիշէն ժամանակակից և ականատես է Վարդանանց պատերազմին, այս բառի ընդարձակ նշանակութեամբ, այնպէս, ինչպէս այժմ մեզանից մէկը գրէր Ղրիմի պատերազմի մասին, իբրև ժամանակակից։

9. Ղազար Փարպեցին, որ գրել է հինգերորդի վերջերում, կախուած է Եղիշէից և Փիլոնի թարգմանութիւններից։ Մովսէս Փիլիսոփոսը Ղազարի Թղթում արդէն մեռած է, ուստի և չէ կարող լինել Փիլոնի թարգմանիչը։ Ղազարի գրութեանց մէջ Վահան Մամիկոնեան մարզպանը կենդանի է, մինչդեռ 505—6 թուին, Բաբգէնի ժողովում (Գիրք Թղթ. 41) Հայոց մարզպանն է Վարդ Մամիկոնեանը, ուստի և այս թուականից անպայման առաջ են Ղազարի գրութիւնները։ Խորենացին, ինչպէս ես արդէն առիթ եմ ունեցել յայտնելու, 678 թուից յետոյ է, ուստի և չէ կարող լինել Փիլոնի թարգման։ Կոնիբերի Byzant. Zeit.-ում և Նոր. Բիւզանդացու «Մշակում» գրածները ոչ մի կերպ չեն խախտում իմ ցոյց տուած յենակէտը Խորենացու գրութեան ժամանակի մասին։

10. Ներքևում հրատարակուած հատուածներից՝ մանաւորապէս Իմաստասիրական Հարցուածները շատ որոշ գաղափար են տալիս Հարքացու լեզուի և փիլիսոփայական կրօնական մտածողութեան եղանակի մասին։ Միևնոյն դէպից են ելածթւում ինձ այս Հարցուածները և Փիլոնի թարգմանութիւնները, վերջինները աւելի խրթին, մութ, յունաբան, լինելով տառացի թարգմանութիւն, իսկ առաջինը—Հարցուածները—թէև նոյնպէս յունաբան, բայց իբրև հայաբանութիւն շատ աւելի ողորկ, ինքնատիպ և կորովի։

11. Հարցուածների միակ Զ-իրը, շատ հնամաշ և եղծուած լինելով, ինձ մեծ նեղութիւն պատճառեց և բնագիրը վերականգնելու համար ստիպուած եղայ ժողովել Հայկ. Բառ.-ի բոլոր վկայութիւնները, առնուած նոյն այս Հարցուածների մի ընդօրինակութիւնից, կատարուած անցեալ դարու երեսնական թուականներին, երբ Զ-ը այնչափ խանգարուած չէր։ Աւելի մանրամասնութեանց մէջ չեմ մտնում։ Ծանօթութեանց մէջ տուել եմ համեմատելի կէտերից շատերը, մանաւանդ որ յոյս ունիմ դեռ շատ անգամ վերադառնալ այստեղ խոշոր գծերով մատնանիշ արուած խնդիրներին։

15 յունուարի 1903
Ս. Էջմիածին



I.

[Զ. 102, էջ 146ա—151բ]

Համառօտագրութիւնք.

A=Զ. 102 Գէորգ. Ցուցակ, թուղթ, երկաթագիր, գրուած Հայոց ՆԻ և ՆԼ թ-ին [=Փրկչ. 971 և 981 թուին.]։

B=Տողամիջերում և լուսանցքներում սրբագրութեւններ A ձեռագրի մէջ, միևնոյն գրչից։

ՀԲ=Նոր Բառգիրք Հայկ. Լեզուի, որ ունի բազմաթիւ վկայութիւններ՝ 1836 թուին կամ քիչ առաջ՝ A-ից կատարուած մի ընդօրինակութիւնից, որ կրում է 739 համարը Վենետ. Մխիթ. գրադարանում։ Տե՛ս Մատենադր. Մանր Ուսումնասիրութիւնք Տաշեան, Վիեննա 1895, էջ 201—202 և յաւելուած։

ՀԲՅ=Յաւելուած ՀԲ-ի, երկրորդ հատորի վերջում՝ «Մնացորդք նորագիւտ բառից»։

## Դաւթի Հարքացւոյ եւ փիլիսոփայի Որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս:

[Ա.] Հարցումն. Զի՞նչ է մարդ։

Վերնագիր. 1—2 տող A «Իմաստասիրական և յիմաստասիրելի հարցուածս B աւելացնում է «Դաւթի Հարքացւոյ և փիլիսոփայի որ յ—»

—Պատասխանի. Հոգի ի մարմնի կապեալ միջնորդաւ շնչոյ, և ի նոյն երկուքն միաւորեալ. սա մարդ ասի և Աստուծոյ պատկեր։

[Բ.] Հ. Զի՞նչ է շունչ։

—Պ. Սեռն աւդ ընդ հրոյ կապեալ, վասն որոյ շունչ ասի, և ի մարմնի եղեալ զանաւսրագոյնս [ոյժից] և զհիւթիցն յինքեան բերելով կեանս՝ կարմրացեալ արինանայ, զի ամենայն մսեղւոյ շունչ իւր արիւնն է. և յԱւրէնսն գրեալ է՝ Մի ուտիցես շունչ ընդ մսոյ. սա յաստուածուստ խոստով|անեալ է շունչ։

[Գ.] Հ. Զի՞նչ հիւթք մարմնոյ։

—Պ. Հող և ջուր. վասն զի ստեղծանելիքս այսոքիկ, որ ի ձեռն զգայական շնչոյն՝ հոգւոյն ընդունին։

[Դ.] Հ. Զի՞նչ է մարմին։

—Պ. Գործի հոգւոյ առ ի կենցաղս հաղորդութեան, որով ոսկերքդ այսր անդր սոլթք եղեալ՝ պատկանեալ ջղակապ յաւդիւք, յաղագս [անդր]ադարձութեան ըստ պիտոյից գործոյդ առ ի գործդ, զի պատշաճ լիցի ի գործավարութիւն։

[Ա.] 2 A «կապեցեալ», որ ուղղում ենք «կապեալ», հմմտ. Բ հարց. «ընդ հրոյ կապեալ»։

[Բ.] 3 A շատ անապահով «ոյժից», թերևս «հոյզից»=«հուզից»։ 4 A «բերելով» B «բերելով կեանս» 5—7 B-ի աւելացրածն է «Զի ամենայն—խոստով՛» 7 A էջ 146բ։

[Գ.] 1 A լուսանցք. հատուածաթիւ ՃՀԱ։

[Դ.] 3 A «յորում» ուղղուած «որով»։ A լուսանցք. «մաղձք» երբեմն մեկնութիւն «սոլթք» բառի. ՀԲ տես «մաղձ» և «սոլթ»։ 4 A «այնդբաղադարձութեան» B «անդադարձութեան», բառի սկզբի տառերը կիսեղծ և մաշուած. ՀԲՑ «այարանդրադարձութեան»։ 4—5 A «ըստ պիտոյիցդ գործոյ» B «ըստ պիտոյից գործոյդ». 5—6 A «լիցի գործավարութիւնն» B «լիցի ի գործավարութիւն» ՀԲ «լիցի ի գործավարութեան» տես «սոլթ» և ՀԲՑ տես «գործավարութիւն»։ Տես և ՀԲ «ջղակապ»։



[Ե.] Հ. Զի՞նչ է հոգի։

—Պ. Իմաստութիւն արարած և անտեղի, ի զգայականիս միացեալ ի շունչ՝ հոգի զսա անուանէ. իսկ զետեղուածն սորա ի սմա և կապուածն ասի միտք. յորմէ այնուհետև իբր ի վայրէ ումեմնէ իմաստն զխորհուրդն բացածադէ, և ինքն յինքեան կայ մնա[յ]։

[Զ.] Հ. Զի՞նչ է իմաստ։

—Պ. Պարգև Աստուծոյ, զաւրութիւն աննիւթ, մի և միածին բնութիւն, անկերպ ակն հոգւոյ, լոյս անըմբռնելի յեղելոյ, պարփակեալ յԱստուծոյ, կամ իսկապէս ճաճանչ Աստուծոյ և իմաստութեանն։

[Է.] Հ. Զի՞նչ է խորհուրդ։

—Պ. Նախանկար կերպացումն գործոյ և բանի և իրի, որ իբր ի հայելւոջ ամենայն ինչ գծեալ, և ընդդէմ դնի մտացն առ ի յ[ը]նտրութիւն. ապ|ա ուրեմն խորհուրդ՝ յղացումն բանի, և բանն՝ ծնունդ խորհրդոյ, որ զգործն և զիրն բացերևեցուցէ. իսկ միտք իբրու պատճառ՝ հայրութեան կալցէ զտեղի։ Իսկ սա ուրեմն այսպէս կերպանայ միտք։

[Ե.] 3 B-ի աւելացրածն է «միացեալ»։ A «անուանեցուցանէ», «ցուց» վանկը նոյն թանաքով ջնջած։ 4 ՀԲ «զ զետեղուածն սոցա ի սմա և կապուածն՝ ասի միտք». ՀԲՑ տես «զետեղուած», ՀԲ տես «կապուած»։ 5 A «ի վայր ումեմն է» B «ի վայրէ ումեմնէ»։ ՀԲՑ տես «բացածադել»։

[Զ.] 3 A «անկերպ ակն» բոլորովին մաշուած և անընթեռնելի։ ՀԲՑ «անկերպ ակն հոգւոյ», տես «անկերպ»։ 4 A յեղէլոյ»։

[Է.] 4 A «ապ[ա ուրեմն]» փակագծուածը մեր լրացրածն է թափուածի տեղ։ 5 A «բան» B «բանն»։ ՀԲ «խորհուրդ՝ յըղացումն բանի, և բանն՝ ծնունդ խորհրդոյ» տես «յղացումն»։ 6 A կիսեղծ «որ զգործն և զիրն բաց—»։ ՀԲ հմմտ. «բացերևութիւն», «բացերևոցել», «բացերևեցուցանեմ», «բացերևական», «բացերևապէս», բոլորն էլ «Դաւիթ Անյաղթից», Պերճարմ.։ 7 A հագիւ նշմարելի «իբրու պատճառ հայրութեան». B «պատճառս»։ B «կալցի»։

[Ը.] Հ. Զի՞նչ է բան։

—Պ. Բան է մտաց բնական ծնունդ, բայց ըստ նմա այլգունակ ներգործէ ի պարզին արտաբերութիւն խորհըրդոյ, իսկ ի մասունս եղեալ՝ ի ձեռն գործոյ հնչման տա[ռի]ւք ձևացեալ և ի դուրս եկեալ յայլս ծանութանայ։

[Թ.] Հ. Զի՞նչ է զգայութիւն։

—Պ. Անզննելոյ անձին ձեռք, զննելիք ըստ զգալեացդ թուոյ, որք ի հոգւոյն մինչև ի մարմինն թափանցեալ և իւրաքանչիւր ոք զէիցդ | բուռն հարեալ առ մի[տդ] ածէ, որում և անասուն կենդանիքդ արժանացեալ մասն ընկալան, ապա ուրեմն և աւգնականք (սոքա) իսկ միմեանց։

[Ժ.] Հ. Իբրու պատուական ելով քան զամենայն մարդս՝ ընդէ՞ր հետի նա [ա]յլոց։

—Պ. Որպէս գաւառնահեղ և ապա թագաւոր. որպէս և ի քեզ է՝ ի վերջէ իշխանական առաջնորդ՝ թագաւորէ միտքդ։

[Ը.] 2 B «մտացն»: 5 A «տա..ք» թափուած և սրբագրութեան հետքերով. Հր. հմմտ. «երկար տառիւք արտաբերեցի» Քերական. Թր., տես «արտաբերել զբան»: Հմմտ. նաև «Որ են և սոքա [=անուն և բայ] մասնկունք արտաբերութեան բանի». Անյաղթ. Պերիարմ. Հր. տես «արտաբերութիւն»,

[Թ.] 2—3 A հազիւ նշմարելի «ըստ զգալեացդ»: 4 A «զէիցս» B «զէիցդ»: A էջ 147ա: 5 A փակագծուածն անապահով, կամ թերևս «առ մինդ»? 6—7 A «ապա ուրեմն աւգնականք իսկ միմեանց» B-ի աւելացրածն է «և», «սոքա»: 7 «իսկ միմեանց» սրբագրութեան հետքերով: 5 Հմմտ. «անասուն կենդանիք» ասացուածը Փիլոն «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» և Սահմ. և Պիտ. Հր. տես «անասուն»:

[Ժ.] 2 A «հետինայլոց»: 3 Հր. չունի «գաւառնահեղ»: 4—5 Հմմտ. «Քանզի որպէս մարմնոյ իշխանական առաջնորդ է դէմքըն, այսպէս հոգւոյ իշխանական միտքն». Փիլոն Այլաբ. Վենետ. 1892, էջ 118:



[ԺԱ.] Հ. Իսկ ո՞րքան գերագոյն այլոց ունի ի կենդանեաց մարդս։

—Պ. Ըստ հոգւոյ՝ առաւելեալ ես բանիւ, ըստ մարմնոյ՝ ձեռաւք։

[ԺԲ.] Հ. Եւ ո՞չ մտաւք։

—Պ. Վարժութիւն է ամենայն ինչ և ի քեզ. ի ձեռն վարժմանն իբր արհեստ ինչ կրթական և ի ձեռն բանիդ իմաստքդ առաւելանին. քանզի իբր իշխան ի վարժի կացեալ ես ունել զիշխանութիւն, այլ զզգալն նաև առաւելեալ ես ի քէն ունին, որպէս ակամբ այծեամն և ականջաւք էշ, հոտոտելեաւք շուն, ճաշակելեաւք ոչխար և այլք նոյնպէս, իսկ ապաքէն մտաց հետևանք այդոքիկ։ Այլ և յառաջ զգա[յ] զպատերազմ ձի, և զդէշ անդղ, և զկարաձմերունս այլք խոտաբոյծք. և ղուղակք զծովական վտանգն, և զհոտ գարնան թռչունք. իսկ սարդիցդ և մեղուացդ և ծա-

[ԺԱ.] 1 B «գերագոյնն յայլոյն»: 3 A «ըստ հոգւոյն», նույն թանաքով ջնջած:

[ԺԲ.] 3 A «իբրև» և-ը քերուած: A «ի ձեռն» B «և ի ձեռն». 4 A «իմաստքն» B «իմաստքդ»: 4—5 A «ի վարժից» ցո՛ն քերուած կամ տժգունացած: 5 A «է» B «ես»: A «ունել» բառը թափուած թղթի բարակութեան պատճառով և նոյն գրչից նշանակուած լուսանցքում: 4—5 Հր. «Իբր իշխան ի վարժի կացեալ է ունել զիշխանութիւն», տես «վարժ»: 5—6 A «զզգալն» B «զզգալն նաև»: 6 A «առաւելեալ ես ի քէն ունին» ոչ շատ ապահով, թերևս կարելի է կարդալ նոյնը նաև՝ «առաւել ես այլքն ունին»: Հր. «Այլ զզգալն նաև առաւելեալ ես ի քէն ունին», տես «վարժ»: 8 A «իսկ» սրբագրութեան հետքերով: 9 A «հետևանք այդ» B «հետևանք այդոքիկ»: A «յառաջ» B «այլ և յառաջ»: 10 A «անկղ» 9—11 Հր. «Յառաջ զգայ զպատերազմ ձի, և զդէշ անդղ և զկարաձմերունս այլ խոտաբոյծք» տես «կարաձմեռն»: 11 B «ղուղականք»: 12—13 A «ծածեացդ» սրբագրութեան հետքերով: 14 A «անցանէ» B «անցուցանէ»: 12—14 Հր. «Սարդիցդ և մեղուացդ և ծածեացդ ճարտարութիւն

ծեացդ ճարտարութիւն անդր ևս քան զամենայն ճարտարապետացն անցանէ կերտս։

[ԺԳ.] Հ. Ընդէ՞ր ախտս բնութիւնս եբեր [ի] պատուական կենդանիս։

—Պ. Ոչ բնութիւնս եբեր, այլ պատիժս ընդ յանցանացն բնութիւնս առընկալաւ, և այլովքն [առ] արարածք զդատաստան հատուցանէ։

[ԺԴ.] Հ. Իսկ ընդէ՞ր որ անպարտն է պատժի ատացեր։

—Պ. Զի վասն մարդոյն ապաքէն ամենայն ընդերկնիւքս, և ի յանցանելն՝ վասն որոյ ամենայնք՝ պատժին և ամենայն ընդ երկնիւքս. այդպէս և առ Դաւիթն։

[ԺԵ.] Հ. Արդ ո՞չ բնական ջիս ախտքն։

—Պ. Այլ և ոչ ախտալից բարերարն ստեղծանէ, քանզի և ոչ ի կենաց մահ. այլ | երեք տեսակք են ախտիցն։

[ԺԶ.] Հ. Ասա՛ զերիցն։

—Պ. Առաջինն՝ բարուոյականդ որ ի լաւ բնութենէն զվատթարն կամաւք ախտացար։ Երկրորդ՝ որում դուք բնականդ ասէք՝ ցանկութիւն, հոգք, տրտմութիւն, եր-

անդր ևս քան զամենայն ճարտարապետացն անցուցանէ կերտըս». տես «ճարտարապետ», «ծածկ», «ղուղակն», «ծովական»: 1—14 Տես այս ԺԲ-դ հարցումը գրեթէ ամբողջութեամբ՝ «Նկատումն Արիստոտելի» գրութեան վերջում, մեր սոյն այս հրատարակութեան մէջ:

[ԺԳ.] 1 A լուսանցքում հատուածաթիւ ՃԼԲ: A «բնութիւնս» շատ մաշուած: A չիք «ի»: 4 A «այլովքն արարարածք» B «այլովքն արարարածքն»=առ արարածս:

[ԺԴ.] 4 A «որոյ» հազիւ վերծանելի:

[ԺԵ.] 3 A էջ 147բ:

[ԺԶ.] 2 A «բարուոյականն» B «բարուոյականդ»: 3 A «կամաւք» հազիւ նշմարելի: 3—4 A «դուքդ բնական» B «դուք բնականդ». տես և ՀԲՑ «բարուոյական»: 4 A «ցանկութիւն» B



կիւղ՝ որ ի հոգւոյ. քուն, քաղց, ծարաւ, վաստակ, և որ ըստ ցրտոյ կամ ըստ տաւթոյ կատարի՝ որ ի մարմնի։ Եւ երրորդս որ յառողջութեան. տապք մարմնոյ և չնչախտք, և հաշմունք և սուր հիւանդութիւնք, կարապետք մահու, և գլխովին իսկ մահ, որ զամենայն կենցաղս լուծանէ զգալիս։ Այլ այս երկու դասք ծայրք առաջնոյն և ի նմանէն ըստ ախտասէր կամացն բուսեալք։

[ԺԷ.] Հ. Ապա ուրեմ՞ն ի բնութեա՞նս։

—Պ. Ո՛չ, այլ յանձնիշխան կամացն ի քէն ծնեալ՝ մնուցեր, դրդեցեր և ի քեզ տիրացուցեր։

[ԺԸ.] Հ. Ուստի՞։

—Պ. Յանաստուածասէր բարուցդ՝ իմաստակիրդչար իմացուածով։

[ԺԹ.] Հ. Եթէ չարժիցի՞ ծառ առանց հողմոյ։

—Պ. Ըստ ներելոյն Աստուծոյ ոչ. ըստ կամելոյն կամ ըստ առնելոյն. կամ թէ ո՞չ լուար ի Տեառնէն՝ Ետու զքեզ յաստուած Փարաւոնի, զՄովսէս զ[ը]նտրեալն, միթէ զՓարաւո՞ն քեզ։

լուսանցքում կրկնում է նոյն բառը, A-ի մէջ մնասուած լինելով: 6 B «ըստ ցրտոյն»: 7 B «Եւ երրորդն է որ յառողջութեան է»: 8 A «և չնչախտք» B «և այլ ինչ ախտք»: A «և հաշմու» B «և հաշմունք»: 10 A «կենցաղս» սղագրութեան հետքերով: A «Այս» չիք «այլ» B «այլ այս»: A «երկու» նկատուում է քէ՛ի հետքեր=«երկուք»: 11—12 A «կամաց ուսեալք» B «կամացն բուսեալք»:

[ԺԷ.] 1 A «ի բնութեանս» շատ մաշուած: 2 A «յանձնիշխանական» վերջաւորութիւնը «ական» ջնջուած թանաքով: 2—3 A «ի քէն ծնեալ մնուցեր, դրդեցեր» շատ մնասուած: ՀԲ «յանձնիշխան կամացն ի քէն ծնեալ, մնուցեր, դրդեցեր և ի քեզ տիրացուցեր» տես «տիրացուցանեմ»:

[ԺԸ.] 2 A «իմաստ..դ»: 3 B «չարիմացդ տուածով»: 1—3 ՀԲՑ «Ուստի՞. յանաստուածասէր բարուցդ՝ իմաստակլրդչար իմացուածովդ» տես «անաստուածասէր»:

[ԺԹ.] 1 A «եթե»: A «առանց հողմոյ» շատ մնասուած: A «թե»: A «ի տէն» շատ մնասուած: 5 A «միթե»:

[Ի.] Հ. Իսկ ո՞րպէս սիրեալ լինէր, եթէ ոչ ի բնութեանս հեշտ ցանկութիւն։

—Պ. Այլ գունակ ծննդեանն, եթէ ոչ ախտասիրեալ։

[ԻԱ.] Հ. Ասա զգուշակն։

—Պ. Ցիշեամ զի արտաքսեալ եղեր յայնց կենաց և ցանկապատեաց զգուշակն բոցեղէն սուրն։.

[ԻԲ.] Հ. Փոքր ինչ առհաւատչեայ։

—Պ. Հր[ե]շտակացն։

[ԻԳ.] Հ. Եւ ո՞չ առանձնական լինելութեամբն համայն ամենայնքն։

—Պ. Ոչ։

[ԻԴ.] Հ. Ընդէ՞ր։

—Պ. Այսպէս մ[............], զի և զեղելութիւն տեսանելով յանեղական կարծեացն խրատեսցի և վատթարն՝ ի չար տրտնջմանէն, իբր այլասէրութեան առ լաւն. որպէս ոչ առանձինն և կնոջն, այլ ի կողէ

[Ի.] 1 A «սիրեալ»=սերեալ? A «լինէր» կարելի է կարդալ նաև «լինել»: A «եթե»: 3 A «եթե»: 3—4 A «ախտասիրեալ» B ախտասիրաբեալ»: 1—4 ՀԲՑ «սիրեալ լինի ցանկութիւն. այլ գունակ (որպէս ի պէտս) ծննդեան, եթէ ոչ ախտասիրեալ (կամ ախտասիրաբար լեալ)»: Փակագծուածները ՀԲ-ինն են:

[ԻԱ.] 2 A «եղէր»: 3 A «բոցեղէնն» վերջին նու՞ն ջնջուած թանաքով: 2—3 ՀԲ «Ցիշեա՛, զի արտաքսեալ եղեր յայնց կենաց, և ցանկապատեաց զգուշակն (անախտ սերնդեան) բոցեղէն սուրն». տես «ցանկապատել»: Հմմտ. «Ի քրովբէից բոցեղինաւ ցանկապատեալ». Անյաղթ. Բարձր.:

[ԻԲ.] 2 A «հրշտակացն»:

[ԻԴ.] 2 A երկու բառ անվերծանելի, քերուածի հետքերով, B տողամիջում «աց» ուղղագրութիւն: 3—4 A «վատթարն» B «զվատթարն»: 5 A «կնոյջն»: 6 A էջ 148ա: 4—6 ՀԲՑ «Այլասէրութիւն առ լաւն. որպէս ոչ առանձին և կնոջն, այլ ի



նախեղելոյն առնի լինել, զի ան|պատճառ ամբաստանութեան առասցի ամենայն վատթարն, և լաւն՝ ամպարհաւաճութեան. աստուստ իմա զԱստուած ոչ պատճառ չարեաց։

[ԻԵ.] Հ. Եւ արդ նո՞յնպէս ունել նոցա։

—Պ. Ոչ։

[ԻԶ.] Հ. Իսկ ո՞րպէս։

—Պ. Աստուածային սահմանաւ չուրջ փակեալ՝ քանակութիւնն լցեալ՝ անդէն զյագումն էառ, որպիսի աստեղացդ։

[ԻԷ.] Հ. Կամ է ինձ գիտել, թէ ընդէ՞ր սիրի ախտն՝ ախտ եւոյ։

—Պ. Պատիրն տեսակաւ պատրեալ գեղեցկի և քաղցր ի ճաշակ։

[ԻԸ.] Հ. Իսկ ո՞րպիսի տեսակն, որ և պատրել կարաւղացոյն։

—Պ. Տնկոց ձևացաւ բարին, որպէս զի սուղապէս առ ձեռն հայեցուսցէ [յ]երկին, այսպէս և չարն տեսակ առեալ ի խորհուրդս կերպանայ, ինքնածին եղեալ ի նոյն վայրի, և ի բարւոյն բուսեալ և ընդ նմա աճեալ՝ ընդդէմ հանդխանայ. և ոգա երկոքին աճեցեալ ի ստեղն, ի յոստս, ի ճիւղս և ի

կողէ նախ եղելոյն առ նա լինել». տես «այլասէրութիւն»:

[ԻԶ.] 3 A «եառ»:

[ԻԷ.] 1 A «թե»: 3 A «պարտեալ» ուղղագրութեան հետքերով. B «պարծեալ գեղեցկի տեսակ»: 3—4 Հմմտ. «Առաջին փայտն՝ գեղեցիկ և քաղցր պտղովն՝ մահու եղև առիթ, պատիր եղեալ աղամածին կուսին». Անյաղթ, Բարձր.:

[ԻԸ.] 4 A «երկին»: 6 A «և ի բարւոյն» չատ մնասուած: 6—7 A «Ե[ւ ընդ նմա աճեալ ընդդէմ հանդխա]նայ». փակագծուածը պատառուած և հազիւ վերծանելի հետքերով: 8—9 A «աճ[եցեալ ի ստեղն, ի յոստս, ի ճիւղս եւ ի ծա]յրս». փա-

ծայրս, երկաքանչիւր ըստ իւր պտուղ բերեալ։ Եւ է բարին ճաշակաւ յոյժ քաղցր, զի պտուղ նորա առ անմահութիւն հայի, իսկ տեսակաւ անպաճոյճ, ինքնագոյ պարզ. վասն այսորիկ և ոչ վաղ զխղձմն բաղձացուցանաւղ զտեսաւղացն, մինչև ի բաց բարձեալ նորա զխմակ և զփորձ առեալ ճաշակմանն. առ որ հայեցեալ ընչաւէտն այն այր՝ ի բաց դարձաւ հրաժարեալ և ոչ կամեցաւ ճաշակել, թէպէտ և Տէրն յորդորեաց առ բարին մերձենալ, սակայն տրտմեալ այրն այն ի բաց գնաց առ պատիր անդր դարձեալ. վասն որոյ ի Տեառնէն իսկ խոստովանեալ, զի Նեղ և սակաւագնաց շաւիղն որ ի յաւէժն տանի ի կեանս։

Իսկ չարն՝ ի ներքոյ դառն ապաժոյժ ղեղւոյ, իսկ ի վերոյ բարեկերպ գունեալ, իբր քաղցր աւծմամբ, զի հրապուրանաւք խաղտեալ զքիմն պարարիցէ, բարձիւ և բարեաւ զտեսաւղսն [տա]փացուցանէ, բայց ծայրայեղն յատակս հայի | դժոխոց, քանզի զսորայն

կազմուածը պատառուած և գրեթէ անվերծանելի։ 9—10 A «Եւ է բարին ճաշակաւ» հազիւ վերծանելի։ 10—11 A «Նորայ առ անմահութիւն» B «Նորայ յանմահութիւն»։ 12—13 A «զխղձ անբաղձացուցանաւղ» առաջին այբ-ի մի ատամը քերուած։ 15 A «ընչաւետն»։ 16 A «կա[մեցաւ ճաշակե]լ» փակագծուածը մաշուած։ A «թեպէտ»։ A «տ՞րն»։ 17—18 A «տրտմեալ այրն այն ի բաց գնաց» բոլորովին թափուած և հազիւ հետքեր թողած։ ՀԲ «Ընչաւէտն այն այր ... տրտմեալ ի բաց գնաց, առ պատիր անդր դարձեալ». տես «պատիր»։ 19 A «ի տ՞էն»։ A «իս» B «իսկ»։ A «զի նե» B «զի Նեղ և»։ 19—20 ՀԲ «ի Տեառնէն իսկ խոստովանեալ, զի նեղ և սակաւագնաց (է) շաւիղն, որ ի յաւէժն տանի ի կեանս». տես «սակաւագնաց»։ 22 A «աւծմամբն» նու՛ն ջնջուած։ 23 A «հրապուրանաւք ... տեալ զքիմն պ....իցէ»։ 22—23 ՀԲ «բարեկերպ գունեալ իբր քաղցր օծմամբ, զի հրապուրանօք խաղտեալ զքիմն պարարիցէ». տես «պարարեմ»։ ՀԲՅ տես և «բարեկերպ»։ 22—23 Հմմտ. «գունեալ վեր ի վերոյ ... յերեսաց պատրանս խաբէութեան» Փիլոն Լին.։ 24 A «.. փացուցանէ»։ 25 A «ծայրայղն» B «ծայրայեղն»։ A էջ



ասացի պտուղ մահ՛ է և ամենայն անփորձաբար անդր սողոսկեալ հոսեցաւ, ըստ որում և աւաղականն այն ի վերայ կայ տէրունեանն բան, զի Լայն առ կորուստ ուղին և բազումք անկեալ երթան։

[Իթ.] Հ. Ո՞յք սկզբունք և ստեղունք երկուցդ ասացեալ տնկակերպիցդ։

—Պ. Բարւոյն է առ յԱստուած հաւատն՝ սկիզբն և ստեղն, սիրելն զնա ի բոլոր սրտէ առանց երկմտութեան, զգուշութիւն պատուիրանին. ի սմանէ միւս բուսեալ բարի ոստ, որ է մարդասիրութիւն, իրաւացեաւն առ նմանն պահել զյարդարակսն։ Ի յայսց երկուցս բաժանեալ բարեգործութեանն ճիւղք, որո[ց զերկնէ և այս]քն ունին, և ամենայն անմահութեան է պտուղ. ապա և զսա կենաց ծառ ասել ոչ եպերելի է։

Իսկ չարին է սկիզբն անգոհացողութիւն զԱստուծոյ, յորմէ մեղկութիւն պաշտամանն լինի, ուստի հաւատոյն երկմտութիւն ծնանի, մոռացումն աստուածայինն [աբ]արեալ երախտեացն։ Աստ լինի ցրտութիւն առ յԱստուած սիրոյն, որով աւտարացաւ մարդն յԱստուծոյ՝ զպատուիրանն քամահելով, քան զոր չիք

148բ։ 26—27 ՀԲՅ «Անփորձաբար անդր սողոսկեալ հոսեցաւ». տես «անփորձաբար»։ 27—29 ՀԲՅ «Ըստ որում և աւաղականն այն ի վերայ կայ տէրունեանն բանի, զի լայն (կամ զ'ի լայն) առ կորուստ ուղին բազումք անկեալ երթան». տես «աւաղական»։

[Իթ.] 2 B «ասացեալս»։ 1—2 ՀԲ «Սկզբունք և ստեղունք երկուցդ ասացեալս տնկակերպիցդ», տես «տնկակերպ»։ 5 A «ի սմա» B «ի սմանէ»։ 5—7 ՀԲՅ «Ի սմանէ միւս բուսեալ բարի ոստ, որ է մարդասիրութիւն, իրաւացեաւն առ նմանն պահել զարդարակսն». տես «արդարակք», «իրաւացի»։ 8 A «ճուղք»։ 8—9 A փակագծուածը կաւկածելի։ 10—11 A «զ[սա կենաց ծառ ասել ոչ եպերե]լի է». փակագծուածը պատառուած – դժուարընթեռնլի։ 15 A «աբեալ»։ 17 A «զպատուիրանն» B «եզպա

ինչ չար. ապա սկսանի կամակարն անցանել կենաց հեշտութեան մարմնոյ և որովայնամոլութեան, յորմէ ամենայն որ առնմանիսն անիրաւութիւն բաղկանայ։ Աստ բաժ[անի ի զոյգս դառնաբեր ոստոց]՝ ի ցանկութիւն ընչից և ի հեշտ ցանկութիւն, և երկոքին սոքա զմարդատեցութիւն կազմեն, և որպէս իսկ ունի Գիրն՝ Ցանկութիւն յղացեալ զմեղս ծնանի և մեղքն՝ զմահ։ Զի փառասիրութիւն զարծաթսիրութիւն ծնանի և նա զագահութիւն, և սա զզրկողութիւն, և նա զգողութիւն և զյափշտակութիւն և զսպանումն, և նա զանյուսութիւն, նա և զմահ։ Իսկ | քոյր նորա հեշտայուսութիւն յղա[ցեալ զգիջութիւն] ծնանի, և սա զ.... ցողութիւն պղծութիւնն, և սա զպոռնկութիւն, և սա զշնութիւն, և սա զանյուսութիւն, և սա զմահ և զկորուստ։ Իսկ նախանձ՝ հեռ և չարահնար դեղատ[ու]ութիւն, որում դուք կախարդ ասէք, յերկոսին կողմանս չար աւժանդակ պատկանեալ չարամանի. և սոութիւն յամենայն մասունս չարիդ ասացի ածեալ ի դէմս և դունեալ. և ամպարտաւանութիւն դառն դահիճ եղեալ՝ երկոքումբք չարյղարկ գոդ բռնակէժ ի կորուստ յո[ւ]ղարկեալ փութացուցանէ։

Իսկ զսա և ծառ գիտութեան բարւոյ և չարի առել ոչինչ կարի մեղադրելի է։ Զի ի ձեռն սորա ապա-

տուկրանն»: 18 A «կամակոլն» B «կամակարն»: 21 A փակա-
գծուածը դժուար վերծանելի և մաշուած: 22 A «սոքայ»: 23
B «գերն անել»: 28 A էջ 149ա: 29 A «և սա զ....»=թերևս՝
«զազիր»: 25—30 ՀԲ «փառասիրութիւն զարծաթսիրութիւն
ծնանի ... իսկ քոյր նորա հեշտացողութիւն յղացեալ՝ զգիջու-
թիւն ծնանի և սա զշնութիւն», տես «հեշտացողութիւն»: 32
A «դեղատութիւն»: 36 A «դախիճ»: 37 A Նախապէս «չարյու-
ենարկ» յետոյ քերուած «ու» և «ե» տառերը: A «յողարկեալ»:
34—38 ՀԲՑ «Սոութիւն և ամբարտաւանութիւն ... երկոքումբք
չար յղար գոդ (կամ յղարկօք) բռնակէժ ի կորուստ յուղար-
կեալ փութացուցանէ». տես «բռնակէժ»: 39 A «զծառ», զան
քերուած: 40 A «արի» B «կարի»: A «ձեռն» B «ի ձեռն»:



քէն իմանի, թէ որքան չար էր չարն, որում հասաւ անասնապէս ախտաւէրն, և որքան բարի էր բարին, յորմէ զ[ր]կեալ ի վայր բերաւ իսկ մտաւորն՝ որ ի պահարապէս անխորհաբար նմանեաց. Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ։

[Լ.] Հ. Եթէ ամենայն ասացեալքդ մասունս ու-ն[ին ինչ առանձինն իւրաքանչիւր] տեսակս։

—Պ. Որպէս իմաստունքն կերպացուցին՝ ունին չարաշուք տեսակս, դաղանաձևս, թունաւորս, որովք խածանել զօգիսն են բնաւորեալք. ժանտք և ժահահոտք, ուստի և ախտք իսկ ասին. յորոց ըստ ամենայն մասանց ախտացաւ աշխարհ, ըստ չորից փոփոխմանց տարերրքս ախտաբերեալք՝ ազգի ազգի [մատու]ցանեն հիւանդութիւնս մարդկան և այլոց կենդանեաց. այլ որպէս զաղրատեսակ է որովայնամոլութիւն ըստ նմանութեան խոզի՝ տղմասէր, գոլորշուտ, որովայնապարպատ, թասուն, յորոնչուն, չարակն, անյագ սուր զի-

41 A «թե ուչափ» B «թե որքան»: 43 A «զ.կեալ» քերուածնե-
րով: 43—44 A «իսկ մտաւորն պահարապէս» B «իսկ մտաւորն
որ ի պահարապէս»: 43—45 ՀԲՑ «Մտաւորն, որ պահարապէս
անփորձաբար նմանեաց, մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ».
տես «անփորձաբար» և ՀԲ» «պահարապէս»:

[Լ.] 1 A «եթե»: 2 A փակագծուածը ընթադրութեան
հետքերով: 3 A «կերպացուցին ունին» ընթադրութեան հետքե-
րով: 3—4 ՀԲՁ «Ունին չարաշուք տեսակս դաղանաձևս, թու-
նաւորս». տես «դաղանաձև»: 5 A «ժախահոտք»: 8 A «....ցա-
նեն»: 6—9 ՀԲՑ «Յորոց ըստ ամենայն մասանց ախտացաւ աշ-
խարհ մեղօf (?), ըստ չորից փոփոխմանց (եղանակաց?) տա-
րերրքս ախտաբերեալք՝ ազգի ազգի մատուցանեն հիւանդու-
թիւնս». տես «ախտաբերիլ»: 10—11 A «նմանութեան» ընթա-
դրութեան հետքերով: 11 A «գոլորշուտ», ոչ «գոլորշուտ» ինչ-
պէս վրիպակաւ ունի ՀԲ: 12 A «չարակն», ոչ «չարակեր» ինչ-
պէս վրիպակաւ ունի ՀԲ: 10—14 ՀԲ «Որովայնամոլութիւնն ըստ
նմանութեան խոզի տղմասէր, գոլորշուտ, որովայնապարպատ,

նեալ, որ գծով և զցամաք և զաւդ միանգամայն յիւր ժողովէ ի լմութիւն. այսպէս և այլքդ ամենայն չարագգեք, ուստի զամենիցդ կերպս ի տեսակս ածել | երկայնից հա.....իցէ: Բայց որպէս աչարճակ է արծաթսիրութիւն [...ճ... Նախանձ և ագա]հութիւն և ընդվայրայած տարապարտաբար [ստութիւն և գ]այղ քանասար յափշտակութիւն և դալնկագոյն Նախանձ, չէկ արևնաուշտ սրտմտութիւն և սուսերալեզու չարաբանութիւն, անհամբոյր խուլ իժ ոխակալութիւն և կոկոզավիզ ինքնահայեաց ամպարտաւանութիւն, և ընդերկնախաղ մոդութիւն և փարուփաղու քսութիւն, որ զամենեսեան ի սպանումն սրել շրջի, արեան ժտեալ սատար, այսպէս չարամայրքն՝ քորք քերցն, զատերք երկուցն ցանկութեանց աւելի ժանտագոյն զտեսակսն ունին:

չարակեր, անյագ, սուր զլնեալ, որ գծով և զցամաք և զօդ միանգամայն յիւր ժողովէ ի լմութիւն». տես «ոլովայնամոլութիւն», «լմութիւն», «Թասուն», «գոլորշուռր» և այլն: 14 A «ի լմութիւն» B «ի լմութիւնն»: 14 — 15 ՀԲ տես «չարագգի»: 15 A էջ 149[բ]: 16 A երկու բառ կիսեղծ, թերևս՝ «երկայնից հա[րկաւորի բան]ից»: 17—18 փակագծուածներից միայն հետքեր են մնացած: 18—19 A «գայղաքանարաս» B «գայղ քանարաս» վերջին բառը սրբագրուած, մենք գրինք «քանասար», Հմմտ. ՀԲ: 19—20 A «դալնկագոյն նախանձ չէկարևն, աուշտ սրտմիտութիւն». ՀԲ «ընդ վայրած ստութիւն և գայլաքար յափշտակութիւն և դալնկագոյն նախանձ, չէկ արևնաուշտ սրտմտութիւն», տես «չէկ», «դալնկագոյն»: 21 — 22 ՀԲ «Անհամբոյր խուլ իժ ոխակալութիւն և կոկոզավիզ ինքնահայեաց ամբարտաւանութիւն». տես «կոկոզավիզ», «ինքնահայեաց»: Հմմտ. Թովմա Արծր. «կոկոզավիզ յինքնահայեաց ամբարտաւանութեամբ նստեալ»: — «Կոկոզավիզ ամբարտաւանութեամբ յինքն հայեցեալ՝ կարծեաց ինքնագլուխ լինել» (Է, 3 և 9): 23 A «երկնախաղ» B «ընդերկնախաղ», թերևս կարելի է կարդալ և «լերկ նախաղ»: 25—27 ՀԲ «Այսպէս չարամայրքն՝ քորք քերցըն, զատերք երկուցն ցանկութեանց աւելի ժանտագոյն զտեսակսն ունին». տես «չարամայր»:



[ԼԱ.] Հ. Ասա, աղաչեմ, զկերպս երկուցն ցանկութեանց:

—Պ. Ի կամակարութենէ ասացի երկաւորք ծնանին՝ փառասիրութիւն և որկորստութիւն, որ և ոգքա իսկ ցանկութիւնք սաս[ս]ցին, մինդ գոդ զգենլեացն և մինդ ուտելեացն անցեալ. և է մինդ գերախանչ, երկնապող, և միւսդ խոզաբար գետնահայեաց, երկբաքարշ. յորոց ըստ նոյնք և երկուք ծնանին ցանկութիւնք, և ի նոցանէ բազմակերպքն ամենայն, չար ուղէշք զմիմեամբք խուռն հիւսեալք և շաղեալք ի միմեանս, փոխակերպեալ ի չարութիւն և զիւրեանցն յայլս տուեալ չարահաւ:

Արդ՝ է ցանկութիւն [տեսակաւ ցամաք, քանզի միշտ անքուն] կայ, ի բաղձանս ևեթ աչարճակ. խոռամանկ, մեքենայող, խորխատ ի սպանումն, երբեմն ճգտի ի յափշտակութիւն, երբեմն ամփոփի ի գողութիւն, երբեմն դիմէ յարձակել, երբեմն դաւով կեղծաւորի, երբեմն մերկանայ ի պատենից, երբեմն ըստութեամբ պատրուակեալ սաքրի: Այսպէս բազմա-

[ԼԱ.] 1 A լուսանցք. հատուածաթիւ ՃՀԳ: 4 — 5 A «սոքայ իսկ»: A «սասայցին»: A «մինդ գոդ զգենլեացն» կիսեղծ: 6 A «և մինդ գերահանչ» B «և է մինդ»: 1 — 8 ՀԲՑ «Ցանկութիւնք ուտելեացն և զգենլեացն, որ է մինդ գերախանչ եւ երկնապող, և միւսդ խողաբար գետնահայեաց երկրաքարշ» տես «գերախանչ»: Հմմտ. «Զթագաւորացն զմեծամեծ և զգերախանչ բարեխառնութիւն: Նորա թէ մեծ և գերախանչ սատացեալ իցէ բարի». Փիլոն ժ. բան. և Լին. 4,25: 9—10 A «չար աւղէշք»: 8 — 10 ՀԲՑ «Երկուք ծնանին ցանկութիւնք (մարմնոյ և ընչից), և ի նոցանէ բազմակերպքն ամենայն, չար ուղէշք, զմիմեամբք խուռն հիւսեալք». տես «բազմակերպի»: 11 A «փոխակերպեալ» B «խոխակերպեալ»—խոլխակերպեալ? 11 — 12 ՀԲ «փոխակերպեալ ի չարութիւն և զիւրեանցն յայլս տուեալ չարահաւ». տես «չարահաւ»: 13 — 14 փակագծուածից միայն հետքեր են մնացել: ՀԲ «Ցանկութիւն միշտ անքուն կայ ի բաղձանս ևեթ աչարճակ», ի յափշտակութիւն և այլն. տես «աչարճակ»: 14 — 15 ՀԲ «խորամանկ, մեքենայող, խորխատ ի սպանումն»: 16 A «ամփամփի»: 18 — 19 ՀԲ «երբեմն մերկանայ ի

մանակ է երկադլուխ դրուժանս այս՝ չար ցանկութիւն և ագահութիւն։ Զայս դաղան ա|ռաջինքն մամոնայ անուանեցին. և տիրէ սա ի մարդն ոչ միայն մինչև ցվերջին շունչն, այլ անդր ևս ի գերեզմանին զհողն իսկ զիւր փառաւորագունի պատանաց յանձն առնէ, պատուիրեալ և զմնացորդս ընչիցն ի խաւարի մնալ, քան թէ ումեք ստանալ ըղձանայ։

[ԼԲ.] Հ. Իսկ որպիսի հեշտ ցանկութիւնն։

—Պ. Հեշտացողութիւն պիղծ և զազիր քան զամենայն տեսակս ախտիցն, զոր բուն հինքն այսպիսի զնա ձևացուցանէին՝ պատանեակ թևաւոր շիկադէմ տարփաւոր կոչելով, իբրու պանծալի ախտից իմն երևեցուցանէին անուամբ և տեսակաւք, կամաւ իսկ որոգայթել զախմարան անգիտութեամբ աւրինին մոլորեալք, իսկ ընդ աւրինաւք ելոյս մեզ արդեւք և յամուսնութեանցն որ զնա ի կիր արկցէ, զի անդ գազանաձև կերպաւդ որպէս զի ոչ վնասակար ինչ հոգւոյն, այլ ընտանի ի բնութենէ և թևաւոր, որպէս յարքունս [հասեալ ճեպ տայ ցանկութեան]՝ փոյթ յորդորման զդէմն առեալ՝ նշանակիչս գործով կատարել զաճեցէքն. առ այս արդեւք իրաւացի վարկանեալ. իսկ առ անիրաւութեանցն ոչինչ այսպէս նմանութիւն, այլ չարագաղան և ժանտատեսակ իբրև զգորտ, և բազմադոյն և բազմագլուխ և բազմոտանի, և տղմուտ միծն մածեալ արեամբ և ամենայն գարշ աղտեղութեամբք, քանզի խոզակերպ չարին է ծնունդ։ Արդ վայր ունի սա ըստ արժանիս ինքեան ի ներքինահամս մասանց մարմնոյ, և է ժամանակաւոր, զի ցրտա-

պատենից, երբեմն ստութեամբ պատրուակեալ սաքրի»․ տես «սաքրիմ»: Հմմտ․ «Եւ երկչոտն սաքրեաց» Փիլ․ Ալլար․ «Սարսէին, սաքրէին դևք», Անյաղթ Բարձր․: 19 — 20 A «բազմամանակ» շատ սրբագրուած: 19—21 ՀԲՑ «Այսպէս բազմամանակ է երկադլուխ դրուժանս այս չար ցանկութիւն և ագահութիւն»․ տես «բազմամանակ», «դրուժան», «երկադլուխ»․ — «բազմամանակը» պէտք է հասկանալ ոչ իբրև «բազմաժամանակ» այլ իբրև «բազմաման», Հմմտ․ «Բազմաման և շաղապատ՝ որպէս օձին շարժումն, այսպէս և հեշտ ցանկութեան» Փիլ․ Ալլար․: 21 A էջ 150ա: 23 A «այղ» B «այղև» 24 A «զուր» կամ «զիւր» 23—24 ՀԲ «Զհողն իսկ զիւր փառաւորագունի պատանաց յանձն առնէ», տես «փառաւորագոյն»: 25 A «խաւարի» B «ի խաւարի»: 26 A «քան թե»:

[ԼԲ.] 1 A «ցանկութիւն» B «ցանկութիւնն»: 3 A «տեսակս» B «տեսակս» լուսանցքում նոյն գրչից «ախտիցն»=«տեսակս ախտիցն»․ A «հինքն» B «հինքն այսպիսի»: 4 A «զսա» կամ «զնա»: A «ձևացուցանեին»: A «զլիկադէմ» կամ «շլիկադէմ»: Հմմտ․ «շիկագոյն հարաղատ և նման իւր յաւելեալ ախտին, քանզի առաւել յարձակումն է շիկագոյն շառագունեալ ախտն» Փիլ․ Լին․: 2—5 ՀԲ «Հեշտացողութիւն պիղծ և զազիր քան զամենայն տեսակս ախտիցն, զոր բուն հինքն այսպիսի զնա ձևացուցանէին, պատանեակ թևաւոր գի կայ դեմ տարփաւոր կոչելով»․ տես «հեշտացողութիւն»: 5 A «պանծալի ախտից» կամ «ախտիս»: 6 A «իսկ» B «կամաւ իսկ»: 7 A «որագայթել զահմարան»: A «անգիտութեան» կամ «անգիտութեամբ»: 6—7 ՀԲ «կամաւ իսկ որոգայթել զահմարան (զախմարան) անգիտութեան օրինին»․ տես «որոգայթեմ», «ահմար»: 10 A «զի» B «որպէս զի»: 11 B «այլ ընտանի յաւրինացդ ի բնութենէ»: 12 A «յարքունս» սրբագրութեան հետքերով: A փակագծուածը շատ վնասուած: ՀԲՑ «գազանաձև կերպաւդ ճեպ տայ», տես «գազանաձև»: 14 ՀԲ «Առ այս արդեօք իրաւացի վանկանեալ»․ տես «վարկանել»: 15 A «առ անիրաւութեանցն» սէ-ն ջնջուածի պէս: 16 A «զգորտ» նու-ն ջնջուածի պէս: 16 ՀԲ (Ցանկութիւն) չարագաղան և ժանտատեսակ իբրև զգորտն», տես «չարագաղան»: 16 — 19 ՀԲ «Ցանկութիւն ժանտատեսակ իբրև զգորտն, և տղմուտ միծն՝ մածեալ արեամբ, և ամենայն գարշ աղտեղութեամբք․ քանզի խոզակերպ չարին է ծնունդ»․ տես «միծ»: 19 — 21 ՀԲ «Խոզակերպ չարին ծնունդ՝ վայր ունի սա ըստ արժանիս ինքեան ի ներքին համս մասանց մարմնոյ»․ տես «համք»: Հմմտ․ «Որովայն, և զինի որովայնին համք»: «Սրտմտականին (վայր) լանջք, և ցանկականին ներքին համք»․ Փիլ․ Ալլար․—«Ներքին համք որովայնին, որ շարժէ զամենայն մարդ ի մարմնական ցանկութիւնսն»: «Ներքին համօքն շաղեալ պատին․ համք ընդ համս խառնին»․ Եղիշէ Խաչել․ և Յես․: 21—22

մարմին է և ջերմին որպէս զսէձ, և որպէս գորտոյ ազգ, զի արեգակն ի վերուստ տապացուցանելով՝ ի նեխութենէ տղմոյն ծնանի, և ի նմին իսկ ճայլս տղմոյն եռայ. և կամ նոյն իսկ աւձիցդ ազգ, որ ի ջերին աւուրսն յար ի գաղանութիւն յանդգնի, և արեգական ի հարաւ խոնարհեցելոյ՝ կաղալէ։

|Նմանունակ և սա առ երկոտասանամենիւք ուրեմն սկսանի չարժել յարբունս հասակին, և որքան մարմինն առ զաւրութիւն և առ եռանդնոտ ջերմութիւնն մատչի՝ սա ևս քան զևս յանդգնեալ մոլեգնի և կատաղենայ։ Որպէս ի ցրտութիւն մարմինն դառնայ և տկարանայ, ըստ նմին և սա հանդարտեալ թաւշնի։ Բայց ինքնաբոյս երկպատիկ գառագիւ չար գազանիս բնութիւնս երբեր զայսսիկ՝ զամաւթ և զերկիւղ. և ցորքան այս պարիսպք յառողջ չինութեան

A «ցրտամարմին է» ուղղագրութիւններով: 22 — 25 ՀԲ «Որպէս գորտոյ ազգ, զի արեգակն ի վերուստ տապացուցանելով՝ ի նեխութենէ տղմոյն ծնանի, և ի նմին իսկ ճայլս տղմոյն եռայ». տես «ճայլ»: 25 A «աւձիցդ» գա-ն կլսեղծ: 25 — 27 ՀԲ «Կամ նոյն իսկ օձից ազգ, որ ի ջերին աւուրսն յար ի գաղանութիւն յանդգնի, և արեգական ի հարաւ խոնարհեցելոյ՝ կաղալէ». տես «կաղալեմ»: Հմմտ. «Զի ջերմութիւն ախտի ի բնութենէն եռայ և ոչ կարէ ելանել. և նա զաւրէն աւձի ունի, որ մինչև ի ջերմանալ աւուրն յար ի գաղանութիւնն, և ի ցրտին աւուրսն կաղուեալ իբրև զմեռեալ լինի»: Ստեփ. Սիւնեաց եպիսկոպոս՝ Պատասխանի թղթոյն Անտիոք. եպս.-ի, Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 330: 26 A «յարի ի գաղանութիւն յանդգնի». 26 — 27 A «արեգակն»: 28 A էջ 150բ: A «բժամենիւք»: 29 A «ցարբունս»: 28—29 ՀԲՑ «Առ երկոտասանամենիւք ուրեմն սկսանի չարժել յարբունս հասակին». տես «երկոտասանամեան»: 30 A «առ զաւրութիւն» B «և որքան մարմինն առ զաւրութիւն»: 31—32 ՀԲ «Եւ քան զևս յանդգնեալ մոլեգնի և կատաղենայ». տես «կատաղենալ»: 34 — 36 ՀԲՑ «Ինքնաբոյս երկպատիկ գառագիւ չար գազանիս բնութիւնս երբեր զայսսիկ. զամօթ և



են՝ թէև չարժի ախտն ընդվզեալ, այդ զուսպ իմն և ամփոփ և ոչ ըստ ձեռն ելեալ վնասուց, այդ իբրև պճուր ի կաթսայի եռայ և ինքն յինքն պակասի, կամ իբրև զառաչորումն ինչ վառման հրոյ ինքեամբ իսկ յինքըն խափչի։ Եւ եթէ սոքա խրամատեալ խզիցին, և արտաքս վաղեալ փիծդ այդ գարշատեսիլ ամենեցուն՝ յայնժամ ապա ծանակ երևութանայ և մեծ գործէ աւճիրս, զմա[հուն ի նմա զգայեալ զհոտ՝ զբաղումս թաթաւեալ] ժահահոտէ, քանզի ի սորայս հոտ դժոխք զիւրն մխէ զխայթոցս։

[ԼԴ.] Հ. Ապա չէ՞ հնար միւսանգամ ըմբռնել զմա։

—Պ. Եթէ ազխազդոյն աստուածային ահին իցէ ախտացեալն, և կամ ընդ տերանց սաստիւ, և չ՛ցէ ևս հնացեալ յախտին՝ մարթ է. զի ախտ հնացեալ յանձին՝ բարք լինին, և բարք հնացեալք՝ բնութիւն։ Եւ սա որպէս արբեցութիւն կորուսանէ զյոլովս [ի տխմարաց] և յանզգայութիւն ածէ։ Այսպիսիս յիմաստուն բանէ կամ յերկիւղէ տերանց իբրև սուր

զերկիւղ». տես «գառագիւ»: 37 A «թեև»: 38 A «ամփոփի»: A «ելեալ» B «ելեալ վնասուց». 40—41 ՀԲՑ «Իբրև զառաչորումն ինչ վառման հրոյ ինքեամբ իսկ յինքն խափչի». տես «խափչեմ»: 38—41 Հմմտ. «Որ իբր պճուր կաթսայից ի հրոյ եռացեալ՝ բանիւ կամաց քոց խափուցանես». Նարեկ, ԻԴ: 41 A «եթե սոքայ»: 42 A «փիծդ» B «և արտաքս վաղեալ փիծդ»: 42—43 ՀԲ «Արտաքս վաղեալ փիծդ այդ գարշատեսիլ ամենեցուն՝ յայնժամ ծանակ երևութանայ». տես «փիծ»: 44—45 փակագծուածը կլսեղծ: 45 A «ժախահոտէ»: 45—46 Հմմտ. «Ո՞ւր են (այլ ընթ. է) դժոխք խայթոցքն (այլ ընթ. խայթոց) քո». Ա. Կորնթ. ԺԵ. 55:

[ԼԴ.] 3 A «եթե»: 5—6 ՀԲ «Ախտ հնացեալ յանձին՝ բարք լինին, և բարք հնացեալք՝ բնութիւն». տես «հնանամ»: 7 — 8 A «իմ····ց» կամ «ի տ····ց», որ կարդում ենք «ի տխմարաց»: 8—9 A «այսպիսիս իբրև» B «այսպիսիս (լուսանցք.) յիմաստուն բանէ կամ յերկիւղէ տերանց իբրև»: 9—10 ՀԲՑ «Յերկիւղէ տե-

խթանով հարեալ ընդոստչի, ի վեր վաղէ, զաչս ամբարձեալ ուր ուրեմն ի թմբրութենէ բուժեալ թափի։ Իսկ եթէ գիտութեամբ լի՝ և կամակոր բարուք զաստուածային աւրէնսն քամահել կրթեցաւ մարդն, և թերևս միանգամ և երկիցս ուխտեաց ինքեամբ ի բաց կալ ի չարէն, և ստեաց ուխտին, և դարձեալ զնոյն ողոքեաց, այնպիսին դժուարաբոյժ է. նմա սաստ բայց եթէ | աստուածայինքն լիցին պատահութիւնք՝ ահի կամ արթնութեան, և կամ ի ձեռն անրջից, և սաստիւք ըմբռնիլ ահիւ, ուր ուրեմն ի խորընկղմութենէն ի վեր ընդոստիցէ։ Ապա թէ յերկուցս յայսցանէ լծոց ի բացեայ իցէ՝ նա զոդ մինչև ցյետին հիւանդութիւնն անբոյժ է։ Զի չարս այս թմբրութիւն ոչ միայն զվիշտս և զվտանգս քամահել տայ, այլ ըղձալութեան նուաղեցուցելոյ մարմնոյն ի ձեռն դեղոց հնարի դրդուել արծարծել զլքեալ ախտն յինքեան և բռնաւորեալ զընութիւնն ծառայեցուցանել, մինչ զի միշտ անհանգիստ իրանացն տագնապեցելոց՝ անժամ զգայութիւնքն բթեն։ Սակայն անընդհատ խորհրդովք

բանց իբրև սուր խթանով հարեալ ընդոստչի, ի վեր վաղէ». տես «ընդոստչիմ»: 12 A «եթե»: A «լի» B «լի ես»: 13 A «քամախել»: 12—13 ՀԲ «Կամակար բարուք զաստուածային օրէնսն քամահել կրթեցաւ». տես «քամահեմ»: 14 A «ուխտեայ» B «ուխտեայ ինքեամբ.» 14—16 ՀԲ «Ուխտեայ ի բաց կալ ի չարէն և ստեաց ուխտին, և դարձեալ զնոյն ողոքեաց». տես «ողոքեմ»: 16 A «սաստ» սրբագրութիւններով: 17 A «եթե»: A էջ 151ա: A «պատահութիւնքն» նու-ն թուում է ջնջուած: 18 A «ահի» B «ահից»: 19—20 A «ի խորընկղմութենեն»: 19—20 ՀԲՑ «Ուր ուրեմն ի խորընկղմութենէն ի վեր ընդոստիցէ». տես «ընդոստչեմ»: 20 A «ապայ թե»: 24—26 ՀԲՉ «Ի ձեռն դեղոց հնարի դրդուել արծարծել զլքեալ ախտն յինքեան և բռնաւորեալ զընութիւնն ծառայեցուցանել». տես «բռնաւորել»: 26—28 A B «մինչ զի անհանգիստ իրանացն տագնապեցելոց». լուսանցք. «առ հանգիստ իրացն»: Հմմտ. «կամ հանգիստ իրանաց իմոց» Սաղմ. ԼԱ, 5.—«Ոչ հանգիստ իրանամբք ի տուէ և ի



ոչ կամի մճարել ի չարէն զրկութենէ. այս է որ ասէն՝ Մահ մեղաւորին չար է։

[ԼԴ.] Հ. Ընդէր բազմադոյն և բազմագլուխ է չարդ։

—Պ. Վասն զի ի դմա ամենայն [չար]ին տեսակք և համք, ուստի [ոման]ք բազմոստեայ չար ասացին, և այլք յիմաստնոց մատակս ախտիցն, սակայն ժամանակաւոր է, ասացի, ախտն բնութեամբ և ի դուռն դերեզմանի լուծանի։

[ԼԵ.] Հ. Զի՞նչ աւրինակ զգուշանալ ի բազմագլուխ չարէդ։

—Պ. Զմարմին նհանջել չորակերութեամբ և զհոգին աստուածային երկիւղիւն, մանաւանդ ա[ղ]ք[նութ]եամբ] ածել ընդ միտ զփոխարէն չարեացն յարդարա[դատն Աստուծոյ, խնդրելով ի Տեառնէ զաւգնականու]թիւն. որինա և հայհոյութիւն անասելի այն է, որ յ.... իդ գործով կատարի թելադրութիւն. այս, գիտեմ զի պատուիրազանցութիւն, որ ի կամակորութենէ է՝ հայհոյութիւն է ոչ միայն, այլ ամենայն հաւատացեալ ոգի տաճար է Աստուծոյ, և տաճար Աստուծոյ ապաքէն սուրբ է, քանզի Աստուած ի նմա. արդ զտաճարն պղծելով ո՞չ ապաքէն զբնակաւղն ի նմա թշնամանէ, կամ եթէ ի Վիմէն զայս ո՞չ լուար։

գիշերի «ձառընտ. տես ՀԲ «իրան»: 30 «Մահ մեղաւորին չար է» Սաղմ. ԼԴ, 22:

[ԼԴ.] 3 A «...ին,=չարին ? 3—4 ՀԲՑ «Բազմադոյն և բազմագլուխ է չարդ ... ուստի ոմանք բազմոստեայ չար ասացին». տես «բազմոստեայ»: 5 A «մատակս» կամ թերևս «տատակս»:

[ԼԵ.] 3 A «չարակերութեամբ»: 3—4 ՀԲ «Զմարմին նհանջել չորակերութեամբ և զհոգին աստուածային երկիւղիւն». տես «նհանջել»: Հմմտ. «Նահանջեա զարտմօզ բարդ չորակերութեամբ, և զխստութիւն սրտիդ կակղեա աքնութեամբ, և զգինճութիւն մարմնոյդ ցամաքեցո աշխատութեամբ». «Եզնկայ խրատք [=Նեղոս], Վենետ. 1826, էջ 306: 4—6 փակագծուածները պատառոտուն: 7—8 A «յ....իդ»=յայտնիդ ? 8 A «գիտե» B «գիտեմ»: 14 A «եթե»:

[ԼԶ.] Հ. Զի՞նչ ասաց Վէմն։

—Պ. Դառն, աղէ, տանջանք ի Տեառնէ այնոցիկ, | որ զհետ մարմնոյ պղծալից ցանկութեանցն հետևեսցին, և չզանգիտեն զփառսն, աղէ, հայհոյել, վասն որոյ ապականեսցին տանջեալք։ Արդ՝ այսպիսի չարաըլուկ և մահկանացու անտանայ ոգին այսուիկ. այդ դա և սպանութիւն և մարմնամեռութիւն և սերմնահեղութիւն և [ապարահութիւնք] և գոնջութիւնք, և գոդ զոմաւ չարժեալք և սորին են սակի։

[ԼԷ.] Հ. Զի՞նչ է մահ։

—Պ. Ի կենաց լուծումն։

[ԼԸ.] Հ. Զի՞նչ է ապականութիւն։

—Պ. Եղծումն տառացելոյ կամ իրացելոյ։

[ԼԶ.] 3 A էջ 151բ: A «մարմնոյ»: 3—4 A «հետևեսցին»: 5 A «ապականեսցին»: A «տանջեալ» B «տանջեալք»: 2—5 Հմմտ. «Գիտէ տէր . . զանօրէնս պահել ի տանջանս ... մանաւանդ որ զհետ մարմնոյ պղծալիցն ցանկութեանց լեցեն երթեալ ... չզանգիտեն զփառսն հայհոյել ... և ապականեսցին տանջեալք». Երկ. Պետր. Բ. 9—13: 5—6 ՀԲ «Այսպիսի չարաըլուկ և մահկանացու անտանայ ոգին այսուիկ». տես «չարաըլուկ»: 7 A «և սպանութիւն» B «և սպանութիւն և (լուսանցք.) մարմնամեռութիւն»: 7—8 ՀԲ «Սպանութիւն և մարմնամեռութիւն և սերմնահեղութիւն և ապարահութիւնք և գոնջութիւնք». տես «մարմնամեռութիւն», «սերմնահեղութիւն»: 8 A «ապ..ահ..նք» սրբագրութիւններով և կետերով: 8—9 ՀԲՑ «Ապաճարութիւնք և գոնջութիւնք՝ սորին են սակի». տես «գոնջութիւն»:

[ԼԷ.] 1 A լուսանցք. հատուածաթիւ ճԻԴ: 1—2 Հմմտ. «Զի՞նչ է մահ.—Լուծումն յապականութիւն» Գիրք Եակ.:

[ԼԸ.] 2 A «կա» B «կամ»: Հմմտ. «Զի՞նչ է ապականութիւն.—Ինքն լուծեալ յէակէ և լուծիչ զէակն յանէակն». Գիրք Եակաց Դաւթի, թարգմանութեամբ Մամբրէի: ՀԲ տես «տառացեալ», ՀԲՑ «իրանամ»:



[ԼԹ.] Հ. Եթէ իցէ՞ մահու վայր։

—Պ. Ի քեզ ինքեան ի բնութեանդ բունեալ, ի ձեռն եղծական կերակրոյդ՝ ընդ քեզ անեալ, որ[ում] յայտնի հետևանք՝ հասարակաց ի քեզ փոփոխմունք, և ի ժամանակի ընդ դարչապարդ դրացուցդ է ուծանալ։

[Խ.] Հ. Զի՞նչ է յարութիւն։

—Պ. Նորոգումն անմահ, զերջանիկն ստացուցանող զկեանսն։

[ԽԱ.] Հ. Եթէ ծանաւթագո՞յն այժմուքս ի կեանսն իցեն։

—Պ. Վերջինդ անմտութ[եա]ն և անհաւատագոյն հարցուածդ. զի թէ ոչ ծանաւթագոյն [ապա և ոչ] դատաստան, և [եթէ ոչ դատաստան] ապա և ոչ յարութիւն, ապա և ոչ Քրիստոս յարուցեալ, ապա և ընդունայն հաւատք, և վեր ի վայր խակ բնաւ եղծին ըստ առաքելական եպերանացն։ Այդ ի բաղմաց [զսակաւն քեզ ածից. ընդէր ապա և տա]պան և տապանակ և ի նմայքն, և վրանն ժամուն, և գայղախազեայք սուրք ի պահեստ առեալք եթէ ոչ ծանաւ-

[ԼԹ.] 1 A «եթե»: 1—6 Ամբողջ հատուածը տես ՀԲ «ուծանալ», ՀԲՑ «եղծական»: 5—6 A «դրացուոյ լուծանալ» B «դրացուցդ է ուծանալ»:

[Խ.] 1 A «նորոգումն» B «նորոգումն անմահ»: 1—3 Ամբողջ հատուածը տես ՀԲ «ստացուցանել»:

[ԽԱ.] 1 A «եթե»: 3 A «անմտութ..ն» սրբագրութիւններով. կարելի է կարդալ և «անմտութիւն»: A «անհաւատագոյն» B անհաւատխաղոյն»: 4 A «թե»: A «ծանաւթագոյն» սրբագրութիւններով: 4—5 A փակագծուածները թափուած: 1—5 ՀԲ «Եթէ ծանօթագո՞յն այժմուքս ի կեանսն իցեն (այսինքն այժմու գործք մեր ի հանդերձեալ կեանս). թէ ոչ ծանօթագոյն, ապա և ոչ դատաստան». տես «ծանօթագոյն»: 8 Առ. Կորնթ. ԺԵ, 13—17: 10—11 ՀԲՑ «Գայլախազեայ] սուրք ի պա-

թութիւն։ Եւ կամ զի՞նչ ի Տեառնէն խոկ՝ Դշխոյն Հարաւոյ դատեսցի ընդ ազգիս, և Նինուէացիք դատեսցին ընդ ազգին, [և Մովսէս՝ յոր դուքն յուսացեալ էք], կամ տղայոցն կի[սահասակ մ]ահն, կամ խեղիցն առողջութիւն, կամ այլաբանիցդ միաբանութիւն։ Այդ այնքան գերազանցութիւն զուգահրեշտակն այն կենաց ունակութիւն, որպէս առ կատարեալս մըտաւք՝ տղայական միտք։ Որպէս խորհրդագէտն ասէ՝ թէ Յորժամ եկեսցէ կատարումն՝ փոքր ի շատէս խափանեսցի, այլ այնպէս ծանեաց որպէս նոյն ծանեաւ զիս։ Ապա ուրեմն զնա յաւիտեան ճանաչել անճառելի իմն է, որ ըստ ամենից անցանէ մտաց շարժմունս։

[ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ]
A էջ 152ա

Փառք ամենասուրբ Երրորդութեանն զաւրացուցչին իմոյ, և ընդունաւղին տկարաց, որ զաւրացուցանէ զհաւատացեալս անուան իւրոյ առ ի ճանաչել զհաւատոյ լրումն։

Ես Դաւիթ քահանայ ցանկաց[այ] լուսաւոր և ան-

հեստ առեալքս»· տես «գայլախազեայ»։ 12—14 Մատթ. ԺԲ, 41—42. Ղուկ. ԺԱ, 31—32։ 14—15 A փակագծուածից հագիւ հետքեր միայն. Համմտ. «Մովսէս՝ յոր դուքն յուսացեալ էք» Յովհ. Ե, 45։ 15 A «կխ·հա··կ»։ 15—16 ՀԲ «Տղայոյն կիսահասակ մահն, կամ խեղիցն առողջութիւն». տես «կիսահասակ»։ 17—18 A «Այդ այն գերանցութիւն զուգահրաշ այն կենաց ունակութիւն» B «Այդ այնքան գերազանցութիւն զուգահրեշտակն այն կենաց ունակութիւն»։ Համմտ. «ի յարութեանն զուգահրեշտակ մեզ ցուցանելով զկեանս» Նիւս. Կազմ. կամ «Զյուսացեալսն ի յարութիւն սրբոցն ցուցանէ զուգահրեշտակ անախտութեամբն լինել. Նիւս. Երգ.։ 20 A «յորժամ» B «թէ յորժամ»։ 20—22 «Այլ յորժամ եկեսցէ կատարումն՝ փոքր ի շատէս խափանեսցի։ Մինչ տղայն էի ... իբրև զտղայ խորհէի ... այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նոյն ծանեաւ զիս». Ա Կորնթ. ԺԳ, 10—12։ 22 A «զնա յաւիտեան» B գծում է այդ երկու բառը և փոխանակ դնում «այպէս»=այնպէս։ 23 A «շարժմունս» սրբագրութեան հետքերով. B «շարժմունս ի կամս Քրիստոսի և Աստուծոյ Հաւր, ամէն»։

ՅԻՇԱՏ. 1 A լուսանցք. հատուածաթիւ ՃՀԵ։ 4 A «ցան-



տուածային վարդապետութեան սրբոյն Աթանասի որ ընդդէմ արիանոսաց և հրէից յաղագս անաւրէնութեան Աստուածն բանի՝ ծանոյց երիս անձնաւորութիւն և մի աստուածութիւն ... Ես ըստ իմոյ նուաստութեանս և աղքատ մտացս ի մի վայր բովանդակեցի, առեալ և սուղ ինչ ի սրբոյն Անդրէասի վարդապետութենէն և այդոց նորին նըմանեաց զշարադրութիւն տոմարաց հաւաքեցի ի գիրս յայս ի յիշատակ ինձ և իմոց կենդանեաց և ննջեցելոց և ի ժառանգութիւն որդւոյ իմոյ Ղուկասու որ գծագրեացս իսկ զսա. Արդ աղաչեմ զամենեսեան որք ընթեռնուք և ուսանիք և կամ յայդս մատենագրէք ի ամէն աւրինակէ՝ յիշման արժանի արասջիք, զի թերևս արասցէ Աստուած ողորմութիւն յաւուրն հատուցման, ուր բանք սպառին և գործք թագաւորին, լսել զերանաւէտ ձայնն՝ Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ. զոր Աստուած մեզ և ձեզ հասարակաց շնորհեսցէ։ Ամէն։ Եւ է նորոգումն սորայ ի ՆԼ թուականութեանս Հայոց։

## 2.

[Անմիջապէս կից նախընթացին]

Ծնայ առանց հաւր, և կին իմ յինէ[ն], դուստր իմ ծնաւ զհայր իմ. անիծեալ է որթն, և աւրհնեալ է գինին։

կաց» 5 Տաշ. «սրբոց սրբոյն». Տաշեանն ունի այս յիշատակարանը առնելով վենետկեան ընդօրինակութիւնից, տես «Մանր Ուսումնասիր.» 1895, էջ 202։ 8 A մի բառ վնասուած։ 9 Տաշ. չիք «և»։ 10 Տաշ. չիք «նորին»։ 20—21 Տաշեան կարծում է սխալմամբ, որ վերջին տողը նորոգութեան մասին «ուրիշ ձեռքէ բլլալու է»։ Ուրեմն Ձեռագրիս այս մասը գրուած է ՆԼ=981 փրկչ. թուին, իսկ առաջին մասերը տասը տարով աւելի կանուխ, 971-ին։ Տես մանրամասն Տաշ. ibid. յաւելուածում իմ նկատողութիւնը։

2. 1 A «յինէ»։ Լուսանցք. հատուածաթիւ ՃՀԶ։ 3 Սրան հետևում է անմիջապէս «Իմաստութիւն Դաւթի քերթողի» նոյն գրչից, բայց աւելի մանր տառերով և կիսեղծ։

## Յ.

[A էջ 152ա]

[Համառօտագրութիւնք.

A=Ձեռագիր 102 Դէորգ. ցուց.
B=Բազմավէպ 1848 Թ. էջ 192 (Հանելուկ)։
C=Բազմավէպի տպրեր ընթերցուածները այլ և այլ Զ-երից։
D=Էմինի հրատարակածը իւր ձեռագրից, Исторія Арменіи Моисея Хоренскаго, 1858, Москва, էջ 369.]

### Իմաստութիւն Դաւթի Քերդողի

Ձեռք ամենակալին ստեղծին զիս,
Բարձրեալն ի բարձանց ի բարձունս ընծայեաց զիս.
Զափ հասակի իմոյ երկիցս երկոտասան,
Այժմ եմ երիցս երկոտասան,
Յորժամ ծնայ զմայր իմ եւ իմաստնացուցի։
Յարեւելս կամ եւ յարեւմուտս խաւսք իմ.
Ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ բարբառ իմ.
Յանչունչս ձայն առնեմ եւ ի մեռեալս բարբառիմ։
Անուն իմ բազկանայ երիւք տառիւք.
Երրեակն ի միակէն,
Երկեակն ի տասնեկէն,
Եւ հնգեակն ի հազարացն։
Ծնունդ իմ ի ջրոյ է,
Եւ մահ իմ ի նմանէ.
Ի հրոյ զարհուրիմ
Եւ ընդ վիմաւք նստեալ՝ արհամարհեմ զնոսա։
Եթէ կարես ճաշակեա,
Եթէ չկարես ի զատ կաց.
Եւզաքումա։ ուխի։

Յ. 1 B քերթողի D Դաւթի փիլիսոփայի իմաստութիւն։ 3 A ընծաեաց BCD և բարձրեալն։ 4 A իմոյ Բկիցս Բժ. C Եւ չափ ամաց իմոց յառաջին էր երկու Բժ։ 5 A երիցս Բժ C այժմ ամեցայ և զարգացայ և եմ Գ ԺԳ։ 6 A ծնա BCD չունին ամբողջ ասացուածը. 7 BCD կամ յարեւելս և խօսիմ յարեւմուտս։ 8 A ի հիւսիսոյ կամ ի հուսւոյ ABCD բարբառիմ։ 9 D յանշունչս ձայն ածեմ C յանշնչոց ձայն արձակեմ, ի մեռելոց խօսիմ. չիք և։ 10 A Գ տառիւք BCD երեք տառիւք։ 11 A ի մէկէն C ի միակէ։ 12 A երրեակն ի ծեկէն B միակն ի հնգեակէն C միակն ի հնգեակէ D միակն ի հնգեկէն։ 13 A ի Ն հազարացն BD ի հինգ հազարացն C հնգեակն ի հազարէ չիք և 14 C Ննունդ իմ ի ջրոյ չիք է։ 17 A զնոսայ BD և ի վէմս C նստելով ի վէմս անարգեմ զնա չիք և։ 18 A եթե .. ճաշակեայ։ 19 A եթե։ 20 A կամ եւ զաղոմա ուխի կամ ուխի BCD չունին ամբողջ ասացուածը։



## Դ.

[A էջ 186ա]

### Դաւիթ Հարքացի ասէ.

Քանզի նախաժամանէր Հոգին ի կոյսն քան զյղացումն մարմնոյն. ըստ որում Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ. որոյ յայտ է ոչ ի նախայղացեալ սաղմի, կամ թէ ի մարմնի, կամ ի կերպացելում սուրբ Հոգին եկեալ միացի կամ բնակեսցէ ըստ նոցա, այլ ի նախահոգելից արգանդին և նախասրբեցելում, ըստ նորա

4. 1 Այս հատուածն արդէն լոյս է տեսել, տես իմ «Ստեփանոս Իմաստասէր» էջ 15։ 2 A «նախաժամանէր»։ 6—7 A «ի նախահոգէլից»։

միայն գիտութեան։ Նա ինքն ասէր. Յորեանահատն սուրբ մարմինն ծնցի, և ի նմին մնացեալ ի նոյն շաղեալ կատարեսցի։ Եւ յարգանդ կուսին առեալ ի նըմանէ զծառայի զկերպ. ոչ յանապականէ և ապականացու, այլ յապականացուէս անապականացուցեալ, և յախտակրելոյս անախտ։ Զի թէ ոչ անախտ էր սա՝ և ոչ սպանանել զախտս կրելով ոչ կարէր. և եթէ ոչ անապական՝ զապականութիւն ոչ կարէր լուծանել. և եթէ ոչ անմահ՝ նորա մեռանելովն և խափանիւր ոչ մահ. զի յանախտին ապաքէն ախտք մեռանին, և յանապականին ապականութիւն լուծանի, և յանմահին՝ մահ։

# 5.

[A էջ 210$^{ա}$]

## Դաւթի Հերտանացոյ՝ Վասն իւղոյն զոր արար Մովսէս.

Զէթն Քրիստոսի աւրինակեալ է, և քահանայն որ աւծանէր զխորանն՝ Քրիստոսի աւրինակ էր, որ ինքեամբ սրբէր զամենայն արարածս և աւծանէր ըղթագաւորս և զքահանայս որպէս զինքն։

Իսկ զմուռն ծաղիկ Շ սիկղ, և հիրիկ Շ, և կինամոմ ՄԾ, և խունկ եղեգան ՄԾ։ Վասն զի [ի] Դ նիւթոյ է մարդ. ծաղիկն զմուռն աւդոյ նման է յաղագս ամբողջ զկենդանութիւն ի մարմնի պահելով, և

10 A «եջ»: 12 A «անապականացուեալ»: 14 A առաջ գրուած է եղել «ոչ կրելով ոչ կարէր» յետոյ առաջին «ոչ»ը կարմրագեղով ջնջած: A «էթէ»: 16 A «էթէ»: 17 A «ապաքեն»:

5. 1 A լուսանցք. հատուածաթիւ ՄԻ: 6 A «հերիկ»: Համմատ. «Հիրիկ հինգ հարիւր սիկղ» Ել. Լ, 24, տես նաև 22—23



հիրիկ ըստ ջերմոտ և հրային մասին, դոքա են չունչ մարմնոյս ըստ աստուածակաղմութեանն, բերելով յինքեանս զկատարեալ թիւ հազարեկին։ Իսկ հողեղինադոյնս է կինամոմն, և ջուրն՝ խունկ եղեգան, զհնդաչափն յինքեան [բ]երելով զկէս հազարեկին։ Իսկ ձէթ դարձեալ աւրինակէ միտք մեր, աւրինակեալ Քրիստոսի, քանզի Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, իսկ զինչ լուսափայլ և նիւթ լուսոյ կայ ի մեզ քան զմիտն։

# 6.

A=№ 2093,$_{6}$՚ թուղթ, հին բոլորգիր, (=ըստ ցուցակի՝ երկաթագիր)· գրուած Խորանաշատ վանքում ՌՀԲ=1223 թ. գրիչ՝ Ստեփանոս Աղթամարցի։

B=№ 742 Գէորգ. ցուց. թուղթ, բոլորգիր, անթուական։

C=№ 1892,$_{16}$՚ թուղթ, բոլորգիր, անթուական։

D=№ 1887,$_{11}$, թուղթ, բոլորգիր, Հայոց ՌՁԵ և ՌՃԸ թուակ. (=1636—1659 փրկ.), գըրիչք՝ տէր Ղազար և Յոհան Կարճաւանցի, «որ ի յԱրևելք գաւառի, որ այժմս Մեղրի ասի»։

[A 198$^{ա}$—200$^{ա}$, B 164$^{ա}$—166$^{բ}$,
C 84$^{բ}$—86$^{բ}$, D 206$^{ա}$—209$^{ա}$]

համարները: 10 A «հերիկ»: 13 A «հունկ»: 13—14 A «զնաչափն» =զհնդաչափն: 14 A «·երելով» մի տառ մաշուած: Այս «Զէթի» հատուածը համեմատել Փիլոն, 1826 Վենետ. էջ 535, Ելից մեկնութիւն, Զէթին նուիրուած գլխի հետ։

## Նկատումն Արիստոտելի

Ուսուցանել մեզ ի բնախաւսութեանցն այնոցիկ, որ հասարակաց բնականաց գոյանայ՝ չնչականաց և անշնչից, զգայականաց և անզգայից. և եթէ այսոքիկ ․է․ են թուով՝ նիւթ, տեսակ, շարժումն, ունայն, անբաւ, տեղի, ժամանակ. և եթէ նիւթ և տեսակ գոյացուցիչք են բնականաց, իսկ շարժումն և տեղի և ժամանակ ոչ են գոյացուցիչք, այլ հետերթանք գոյացուցչացն. իսկ ունայնն և անբաւն ըստ ճշմարտութեանն ոչ են, այլ ըստ կարծեաց, որպէս և Դեմոկրիտէս և Անաքսագորաս, զորս յանդիմանէ Արիստոտէլ վասն ունայնին ասել թէ ամենևին իսկ չէ, իսկ անբաւն ըստ բոլոր ինքեան չէ, այլ ըստ մասանց, որպէս՝ ամիս, տարի, տաւն, հանդէս. և թէ այսոքիկ եւթանեքին առ հասարակ բնականաց գոյանան, բայց ոմանք

6. Վերնագիր. A-ի մէջ Նկատ. Արիստոտելի գտնւում է «Արիստոտէլի Յաղագս Աստուծոյ» գրութեան ետևը, անմիջապէս կից, բայց այսպիսի ծանօթութեամբ՝ «յայլ գրոց»: B-ի մէջ գրուած է «Դաւթի փիլիսոփայի Առածք հինգ» գրութեան կից, առանց որ և է ծանօթութեան: C-ի մէջ ինչպէս B-ում: D-ի մէջ «Դաւթի փիլիսոփայի» Նախաց գրքից յետոյ:

1 A Արիստոտէլի C Արիստոտէղի, այս ձեռագրում երբեմն այղ=այլ ել, որ զանց ենք առնում նշանակել: Չենք նշանակում նաև օ=աւ BCD ձեռագրերում: 2 BCD ուսուցանէ BC ի բնախօսութեանցն D ի բանախօսութեանցն 3 B ըընակաց A գոյանա D գոյանան ABC չիք շնչականաց 4 A զգականաց և անզգաից 5 AD չիք են A թուով D թւով 6 D տեղի, ժամանակ, ունայն, անբաւ: 6—7 D գոյացուցիչէն D չիք և (տեղի) 8 BC չիք են BCD զհետ երթան 9 BC ունայն 9—10 BC ճշմարտութեան 10—11 BC դեմոկրատէս D դեմոկրիտոս 12 BCD անաքսագորաս A զոր 13 B ինքեանն է C ինքեանն է A չիք ըստ 14 A տուն BC չիք տաւն BC չիք և BCD եթէ 15 B բնակաց BCD



ոմանց առաւելագոյն. քանզի նիւթ առաւել այնոցիկ գոյանայ, որք ի լինելութեան և յապականութեան են, իսկ երկնաւորացն ոչ է նիւթ, այլ համեմատեալ նիւթոյ. զի նիւթ հակակայից է ընդունակ և պէսպէս տեսակաց, իսկ ենթակայ միումն տեսակի է ենթակացեալ հանապազ ըստ միում թուոյ. և թէ տեսակ երկնայինցն առաւել գոյանայ քան աստէիցս, որ ի լինելութիւն և յապականութիւն. զի որ յաստիսս է տեսակ լծակցեալ է ընդ ապականութեամբ և ընդ պակասութեամբ, ոչ ընդ այնմ որ ոչ երբեք ոչ ուրեք ոչ է, այլ ընդ այնմ որ երբեմն է և երբեմն ոչ է, որպէս յառաջընթաց տեսակն. և եթէ տեղի աստէիցս առաւել գոյանայ քան երկնայինցն, վասն զի անմոլարն չէ ի տեղւոջ, ուստի և ի տարակուսին Արիստոտելի ասեն թէ Զիարդ ասես զանմոլարն շարժիլ եթէ ոչ է ի տեղւոջ, զի ամենայն որ շարժի ի տեղւոջ է. վասն որոյ և ասէ, թէ Սա ըստ մասանց շարժելով ըստ մասանց և ի տեղւոջ է։

Իսկ ժամանակ առաւել երկնայինցն գոյանայ քան թէ աստէիցս, զի ոչ չափ է շարժման բոլորիցն, քանզի

չիք ոմանք 16 BC յոմանց 17 B գոյանա D գոյանան 18—19 B նիւթոյ 20 AD ենթակա BC միում D միումն AD չիք է BC ենթակայացեալ 21 BCD եթէ 21—22 A երկնաւիցն BC երկնայինցն D երկնայիցն 22 AD գոյանա D քան թէ A աստէիցս 22—23 BC որ ի լինելութեան և յապականութեան D որ ի լինելութեանն և յապականութեանն 23 BC զի աստէիցս տեսակ 24—25 D չիք և ընդ պակասութեամբ 25 D չիք որ A չիք ոչ (ուրեք) D ոչ ուրեք երբեք ոչ է 26 BC չիք ընդ A այն 27 B առա էից է 28 AD գոյանա BCD քան թէ A երկնաւիցն D երկնայիցն BC երկնայինցն 28—29 A ի տեղւոջ 29 A ի տարակուսէն D և տարակուսն BC յԱրիստոտելէս 30 BC եթէ BC անմոլարն D շարժել BCD չիք է 30—31 D ի տեղւոջ 31 D շարժի տեղւոջ է 32 BC եթէ D առյ 33 AD ի տեղւոջ է 34 A երկնաւիցն A գոյանա 35 BC եթէ A էիցս 34—35 D իսկ ժամանակ առաւել աստէիցս գոյանա, քան երկնայիցն 35 BC շարժմանց BC բոլորից D շարժման

ոչ է արագագոյն քան զերկնայինն անմոլարին շարժումն։ Եւ եթէ շարժումն երկնայինսցն առաւել գոյանայ քան եթէ աստէիցս, զի յաստիսս շարժումն դադարումն ունի, իսկ յերկնայինսցն ամենևին ոչ, քանզի մշտաշարժք են։ Իսկ ունայնն և անբաւն ի սոսա տեսանին, անբաւն ի շարժմանն իսկ ունայնն ի տեղւոջ։ Եւ եթէ սոքա են և ոչ աւելի և ոչ նուազ վասն այսր պատճառանաց, վասն զի բնականքն մարմին ունին, և որպէս մարմին գոլով ունին նիւթ և տեսակ, իսկ որպէս բնական մարմին գոլով ունին շարժումն, իսկ որպէս շարժումն ունելով ունին տեղի և ժամանակ, վասն զի ամենայն շարժումն աստէիցս բնականաց ժամանակաւ լինի և ի տեղւոջ։ Իսկ ունայնն և անբաւն, որպէս յառաջագոյնն ասացաք, ի սոսա տեսանին։ Այս են պատճառք, վասն որոյ են սկզբունք ամենայն բնականաց, և ոչ առաւել և ոչ նուազ։

Ամենայն մարմին շարժուն յայլմէ բնաւորեցաւ շարժիլ, քանզի ոչ է մարմին ինքնաշարժ, այլ հոգին ինքնաշարժ է։ Արդ՝ տեսանեմք զերկին մարմին շարժուն, յայտ է թէ յայլմէ, և եթէ յայլմէ ումեքէ շարժի՝ ապա է ոմն որ շարժէ զերկնային մարմինն, և վասն զի մի և նոյն շարժումն է երկնի՝ յայտ է եթէ ի միոջէ ումեմնէ է միասյն շարժումն, վասն զի բազմաց այլ շարժումն բնաւորեցաւ լինել. և վասն զի մշտաշարժ է երկին՝ յայտ է թէ որ շարժէ՛ն զերկին մի է և անբաւ զաւրութիւն ունի, զի եթէ բովանդակեալ զաւրութիւն ունէր՝ ոչ հանդուրժէր անդադարապէս և կարգաւորաբար շարժել զերկին, ուստի և յայտ է թէ՝ և անմարմին է, զի եթէ մարմին ունէր որ շարժէ՛ն զերկին՝ ոչ կարէր հանապազ շարժել զերկին, զի ամենայն մարմին բովանդակեալ է և բովանդակեալ զաւրութեան հանդիպեցաւ, իսկ բովանդակեալն զաւրութեամբ զիարդ անբաւ զաւրութիւն ունի կամ զիարդ անդադարապէս կարէ շարժել զերկին. և յայսմ ամենայնէ յայտ եղև թէ անեղ է. և որ ոչ է եղեալ՝ և ոչ վախճան ունի, վասն զի եղեալն ոչ կարէ անբաւ զաւրութիւն ունել, քանզի ամենայն եղեալ ի նիւթոյ և ի տեսակէ է եղեալ, իսկ որ ի նիւթոյ և ի տեսակէ եղեալ է ոչ է անեղ մարմին և ոչ անբաւ զաւրութիւն ունի, իսկ այն որ շարժէ՛ն զերկին անմարմին ցուցաւ և անբաւ զաւրութիւն ունել։ Իսկ եթէ անեղ է՝ յայտ է թէ անապական է և ոչ յումեքէ եղեալ, այլ ինքն է արարիչ և ամենայնք ի նմանէ եղեալք, վասն զի յառաջ քան զամենայն է. և սմա հետևի մշտնջենաւորն և անսկիզբն և անվախճանն։

Արդ ահա ցուցաւ ըստ կարգիդ ասացելոցս, եթէ է ոմն որ շարժէ զերկնային մարմինն, և մի է, և անբաւ զաւրութիւն ունի, և անմարմին է, և անեղ է, և անապական է, և արարող է։ Եւ այսք ամենայնք որք ոչ ումեք այլոց արարածոց բնաւորեցաւ պատշաճիլ,

անմոլարեսյն 36 CB չիք է A չիք քան զերկնայինն D զերկնային 37 A երկնաւինսցն D երկնայեսյն B երկնայեսյն շարժումն C երկնայինսցն շարժումն AD գոյանա 38 BC չիք եթէ D թէ BC յաստիս 39 BC երկնայինքն A յերկնաւինսցն BCD ամենևին 40 BC ունայն 41 A անբաւ BCD ի շարժման D ի տեղոջ 42BC չիք ոչ (աւելի) 43 BC այս D պատճառաւայ 44 BC ունի 45 BC և շարժումն 46 D շարժում 47 D բնականաց 48AD ի տեղոջ BC ունայն 49 BC և յառաջագոյն BC ասացեալ BC տեսանելին 50 D սկզբմունք 51 A բանականաց D չիք և 53 A չիք է 54 BC տեսանեմ զերկնային 55 BC եթէ 56 BD ապա ուրեմն C ապ․'' A զերկնաւին 57 A զի և մի շարժումն D շարժում է D չիք երկնի D թէ 58 BC ումեքէ է

միայն շարժումն 60 BC եթէ BCD շարժէ AD չիք մի է և 63 A կարգաւորապէս BC զերկինս BC ուստի յայտ է եթէ 64 BC չիք և BC թէ D շարժէր 67—68 BC զօրութիւն 71 D վաղճան 73 C է եղեալ 74 C է եղեալ BCD ոչ է անմարմին 75 A չիք իսկ այն B զերկի 76 BCD ունի 77 BC եթէ BC եղեալ է D է եղեալ AD չիք (ինքն) է 78 BC ամէն 79 BC նմա A մշտենջենաւորն և անսկզբն 80 D անվաղճանն 81 BC ասասցելոց D թէ 82 A զերկնաւին ABC մարմին 83 BC չիք (անեղ) է 84 D չիք է A արարող չիք է B անարարաւղ է C անարարօղ է C ամէն 85 BC յարա-

բայց միայն միայնում Աստուծոյ և նմա միայն տալի է պաշտաւն։

Եւ որք միանգամ զբնութիւն իրացն կամին գիտել՝ զերկոս զայսոսիկ գիտելի է. նախ՝ զսկիզբն իրացն և զպատճառն, երկրորդ՝ թէ նա է սկիզբն և պատճառ այլոցն, երրորդ՝ թէ անհնարին է այլազգ լինել. երեքումբք սոքաւք է մարթելի առնել մակացութիւն։

Վարժումն է ամենայն ինչ և ի ձեռն այնր՝ իբր կրթարանաւ լեզուի՝ և բանն ևս յարդարի և իմաստքն յառաջեն։ Քանզի իշխանութիւն ունելով կրթարանաւք իբր բնութեամբ բնաւորաբար ի դիտումն առաջակայի շարժի բազում անգամ, որպէս ակամբ՝ այ-

բաղածս 86 BC չիք և AD տալ 88 A որ BCD զբնութիւնս 89 A չիք զերկոս զայսոսիկ գիտելի է B գիտելի չիք է C գիտելի է D է գիտել 90 D զպատճառ A երկորդ D նայ 91 B այլոց AD չիք է 92 AD երեքումբ BC մարթիլ:

92 Այստեղ վերջանում է A-ն։ D-ն շարունակում է, կրկնելով՝ համառօտաբար՝ վերեւի հատուածը՝ «ընականքն մարմին ունին, և որպէս մարմին գոլով՝ ունին նիւթ և տեսակ, իսկ որպէս նիւթ և տեսակ գոլով՝ ունին շարժումն, իսկ որպէս շարժումն ունելով՝ ունին տեղի և ժամանակ, վասն զի ամենայն շարժումն աստէկցս ընականացս ժամանակաւ լինի և ի տեղւոջ. իսկ ունայնն և անբաւն ի սոսա տեսանին, անբաւն ի շարժման, իսկ ունայնն ի տեղւոջ: Ոմն որ շարժէ զերկնային մարմին, և մի է, և անբաւ զաւրութիւն ունի, և եթէ անբաւ զաւրութիւն ունի՝ յայտ է թէ և անմարմին է, և եթէ անմարմին է՝ յայտ է թէ անեղ է, և եթէ անեղ է՝ յայտ է թէ անապական է, և եթէ անապական է՝ յայտ է թէ ոչ յումեքէ է եղեալ, այլ ինքն է արարիչ և ամենայնք ի նմանէ եղեալք, վասն զի յառաջ քան զամենայն է, և սմա հետևի մշտնջենաւորն և անսկիզբն և անվախճանն. և այսք ամենայնք որքոչ ումեք այլոց արարածոց բնութեան պատշաճիլ, բայց միայն միայնում Աստուծոյ, և նմա միայն տալոյ է պաշտաւն»:

94 C բան 97 BC այծեամբն, որ մենք ուղղում ենք:



ծեամն, և ականջաւք՝ էշ, և հոտոտելեաւ՝ շուն, և ճաշակելեաւք՝ ոչխար, և այլքդ։ Այդ և յառաջ զդայ զպատերազմն ձի, և զդէշ անգղ, և զկարաձմերունս այլ խոտաբոյծք, և զծովային վտանգս լուղակք ջրայինք, և զաշուն զեռունք, և զհոտ դարնայնոյ թռչունք։ Եւ զոր սոքա բնութեամբ՝ ի ձեռն խորհրդաբերութեան մտաց և կրթութեան բանի ունի մարդս։

98 B հոտոտեաւ 99 B այլ 100 BC անկղ BC կարան մերունս, որ մենք ուղղում ենք: 101 BC վտանգս C լօղակք 103 B խորհրրդաբերութեան 104 B կրթութէ. Վերջին նախադասութիւնը ՀԲ ունի Անյաղթի անունով, այսպես. «Զոր սոքա բնութեամբ, ի ձեռն խորհրդաբերութեան մտաց և կրթութեան բանի ունի մարդս. Անյ. նց. իմ։» (տես «խորհրդաբերութիւն»): 93—104 Տես սոյն այս հատուածը գրեթէ նոյնութեամբ Նախընթաց Իմաստասիրական Հարցուածներում, Հարց. ԺԲ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0158883

7147



## Բովանդակութիւն.

Յառաջաբան . . . . . . . . 3
Դաւթի Հարքացւոյ և փիլիսոփայի որ յիմաստասիրականն և յիմաստասիրելի հարցուածս . . . . . 5
Ծնայ առանց հաւր . . . . . . . 29
Իմաստութիւն Դաւթի քերդողի . . . . . 30
Դաւիթ Հարքացի ասէ. Բանքի նախաժամանէր հոգին . 31
Դաւթի Հերթանացոյ վասն խաչոյն զոր ասար Մովսէս . 32
Նկատումն Արիստոտելի . . . . . 33-34